ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱՐԵՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Վերջին տասնամյակների սոցիալ-տնտեսական փոփոխությունները նվազեցրել են գյուղատնտեսական գործունեության նախկին կարևորությունը՝ առաջացնելով գյուղական համայնքների վերաբերյալ սոցիոլոգիական ուսումնասիրությունների ավելի լայն և համակարգված մոտեցման անհրաժեշտություն[1]: Ինչպես նշում է կանադացի հեղինակ Բ. Ջինը, «այդպիսի ուսումնասիրությունների խնդիրները ամբողջ աշխարհում խիստ փոփոխական են, բայց հիմա փոխվել է ուսումնասիրությունների հիմնական կիզակետը՝ գյուղական համայնքը որպես «ազգային հասարակություն» դիտարկելու մոտեցումից դեպի ոչ նյութական գործոններով (սոցիալական կապիտալ, համայնքի կարողությունների զարգացում, ինքնակառավարում) պայմանավորված սոցիալական զարգացում»[2]: Իսկ բելառուս սոցիոլոգ Ն. Լիխաչյովը գրում է. «Գյուղական համայնքն ու ընտանիքը մեծապես ենթարկվում են ուրբանիզացման գործընթացների ազդեցությանը, որի պատճառով նվազում է գյուղատնտեսական գործունեության կարևորությունը»[3]: Գյուղական բնակչության շրջանում գնալով պակասում է զուտ գյուղատնտեսությամբ զբաղվողների մասնաբաժինը, և աճում է մտավոր աշխատանք կատարողների, ձեռնարկատերերի, սպասարկման ոլորտի աշխատակիցների և սոցիալական այլ խմբերի ներկայացուցիչների թիվը: Տնտեսական համագործակցությունը, ագրոարդյունաբերական համալիրների ստեղծումն էապես փոխում են գյուղական բնակչության սոցիալական կառուցվածքը: Արդի պայմաններում քաղաքը գերիշխող դիրք է զբաղեցնում, մարդկանց ընկալումներում այն դառնում է հասարակական իդեալի խորհրդանիշ, ինչն էլ կարող է հանգեցնել գյուղացու ավանդական ինքնության վերափոխման, անգամ ճգնաժամի:

Հետխորհրդային Հայաստանում տնտեսական համակարգային

---

[1] Տե՛ս **Bakker J. I. (Hans), A. Winson**, Rural Sociology // Contemporary Sociology: Critical Perspectives, ed. P. S. Li and B. S. Bolaria, Pitman, Toronto, 1993, էջ 511-512:

[2] **Jean B.,** The study of rural communities in Quebec: from the “folk society” monographic approach to the recent revival of community as place-based rural development, էջ 56-68 // Journal of Rural and Community Development, Brandon University, Vol. 1, 2006, № 2, p. 68.

[3] **Лихачёв Н.** Сельская семья: вопросы гармонизации супружеских отношений (на материалах социсследований в Могилевской области) // Социологическая наука и образование: состояние, проблемы и перспективы развития. Минск: БГУ, 2010, с. 110.

ճգնաժամի և Ղարաբաղյան պատերազմի պատճառով առաջացած սոցիալական լուրջ հիմնախնդիրների բացասական ազդեցությունը հայ հասարակության վրա մինչև հիմա էլ շարունակվում է: Գյուղական համայնքները նույնպես զերծ չմնացին սոցիալական արմատական փոփոխություններից: Նախկին տնտեսական կարողությունների ոչնչացումն ուղեկցվում էր արհեստականորեն արագացված գյուղական ռեֆորմներով՝ հողի համատարած սեփականաշնորհմամբ և, այսպես կոչված, շուկայական հարաբերությունների ներթափանցմամբ: Դրա հետևանքով գյուղերում լայնորեն տարածվեց աղքատությունը: Աղետի գոտու գյուղական համայնքներին զումարվեցին Տավուշի, Վայոց Ձորի և Սյունիքի սահմանամերձ գյուղերը, որտեղ ազերիների ռմբակոծություններից ևս մեծապես վնասվեցին ենթակառուցվածքները՝ շինություններ, ջրագծեր, ճանապարհներ և այլն: Ֆինանսական միջոցների սակավության պատճառով Հայաստանի գյուղական համայնքներից շատերում կրճատվեցին օգտագործվող ցանքատարածությունները, անասունների գլխաքանակը, փակվեցին վերամշակող ձեռնարկություններ:

2002 թ. փետրվարի 20-ի «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքով կատարված հողի սեփականաշնորհումը չստեղծեց նոր աշխատատեղեր, որովհետև մեր երկրում բազմաթիվ են գյուղատնտեսության զարգացումը խոչընդոտող օբյեկտիվ հանգամանքները (հողերի անպիտանություն, ոռոգման ջրի սակավություն, բնակլիմայական անբարենպաստ պայմաններ, պատերազմական գործողություններ սահմանային գոտում): Հայաստանում դեռևս լուծված չեն պարարտանյութերի մատակարարման, գյուղտեխնիկայի օգտագործման, գյուղմթերքների իրացման, գյուղատնտեսական վարկերի տրամադրման խնդիրները: Գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու՝ խորհրդային տարիներին յուրացված տեխնոլոգիաները մենատնտեսների մեծամասնության համար դարձան անհասանելի. փոքր հողակտորներում անհնար էր իրականացնել ինտենսիվ հողագործություն, և նման պայմաններում գյուղատնտեսական աշխատանքով զբաղվելն անարդյունավետ էր: Շատ գյուղական համայնքներում ցայսօր հաղթահարված չէ տեխնոլոգիական հետամնացությունը: Դրանց զուտ գյուղատնտեսական նշանակալիությունը գնալով նվազում է, ընդ որում՝ ոչ միայն երկրի այն շրջաններում, որտեղ զարգացած է հանքարդյունաբերությունը: Մյուս կողմից, գյուղացիները սոցիալապես պատրաստ չէին նորամուծությունների (տեղական ընտրություններ, շուկայական մրցակցություն և այլն), առաջացել էր նոր ինքնության՝ ֆերմեր գյուղացու ձևավորման խնդիր:

Հայաստանի գյուղական համայնքներում տեղի են ունենում սոցիալական կառուցվածքային փոխակերպումներ, որոնց զուգահեռ փոխվում են նաև հայ գյուղացիների արժեքային դիրքորոշումները և ընկալումները: Հայաստանում հողի սեփականաշնորհումը չստեղծեց

կայուն զարգացման սոցիալ-տնտեսական անհրաժեշտ պայմաններ: Մի կողմից առարկայական խոչընդոտներն էին շատ (ագրարային ենթակառուցվածքների թերզարգացածություն և այլն), մյուս կողմից ենթակայական հանգամանքներն էին խանգարում (սոցիալական հենարանի բացակայություն, սոցիալական անարդարություն և այլն): Հետխորհրդային Հայաստանի գյուղերում սոցիալական վիճակը խիստ մտահոգիչ էր՝ ֆինանսական ռեսուրսների սակավություն, իշխանություններից համատարած դժգոհություն, բնակարանային չլուծված հիմնախնդիրներ, աշխատատեղերի բացակայություն, սոցիալական անարդարություն: Փոխվել է նաև ժամանակակից հայ գյուղացու սոցիալական ինքնաընկալումը: Եթե նախկինում հայ գյուղացին իր նույնականացումներում առավելապես ավանդապաշտ էր, աշխատասեր, օգնության ձեռք մեկնող, ապա այժմ նման բնութագրիչներն աստիճանաբար մղվում են հետին պլան: Հիմա կարևոր է, նույնիսկ ինչ-որ չափով պարտադիր է լինել նյութապես հաջողակ: Նախապատվությունը տրվում է սեփական ուժերին ապավինելուն և բացառապես ընտանիքի օգնությանը, համայնքի կարծիքը գնալով ավելի քիչ է կարևորվում, կտրուկ նվազել է մասնակցությունը գյուղի ընդհանուր խնդիրների լուծման գործընթացներին: Համատարած սեփականաշնորհման և կոլեկտիվ աշխատանքի նախկին ձևերի ոչնչացմամբ փոքրացել է ներհամայնքային համագործակցության դաշտը, փոխարենը շատացել են գյուղացիների միջև վեճերը զանազան դրդապատճառներով: Զուգահեռ տեղի են ունենում աշխատուժի որակազրկման, մշակութային և սոցիալական կապիտալի բնույթի և կառուցվածքի պարզեցման, սոցիալական հարակցման քայքայման, փոխօգնության ինստիտուտի վերացման, սեզոնային միգրացիայի ու ընտանիքի փոքրացման և «վերազգայնացման» գործընթացներ: Փոխվում է գյուղական կյանքի ոճը, «գեղամեջի» ավանդական տեղն ու գործառական դերը ստանձնել է համացանցը, շատ կենսական հարցերում գյուղացիները ապավինում են «բախտի քմահաճույքին», դարձել են պատեհապաշտ: Հայ գյուղական համայնքային կյանքի նման փոխակերպումները հանգեցնում են միջանձնային հարաբերություններում փոխադարձ վստահության պակասի, որի հետևանքով թուլանում ու խաթարվում են համայնքային սոցիալական՝ նախկինում բավականաչափ ամուր կապերն ու վերահսկողությունը: Նման իրավիճակում մարդկանց մեջ առաջանում է ֆրուստրացիա, և շատ գյուղացիներ ելք են փնտրում արտագաղթի մեջ:

Նույնիսկ այն հանգամանքը, որ գյուղական համայնքներում վարձու աշխատողի ինստիտուտ ձևավորվեց, չնպաստեց նոր աշխատատեղերի ստեղծմանը: Գյուղատնտեսական վարձու աշխատանքը կայուն չէ, մարդիկ հեշտությամբ հրաժարվում են դրանից, մանավանդ եթե կա առավել նպաստավոր պայմաններով աշխատանքի հնարավորություն, այդ թվում՝ արտերկրում: Բանն այն է, որ Հայաստանի սո-

ցիալ-տնտեսական իրավիճակի ներկայիս պայմաններում ներքին աշխատաշուկան չի կարող մրցել աշխատանքային միգրացիայի տեսանկյունից հեշտ հասանելի երկրների հետ: Հետևաբար արտերկրում վարձու աշխատանքի համար առավել նպաստավոր պայմանները լուրջ խթան են ՀՀ համայնքներից աշխատանքային միգրացիոն հոսքերի ձևավորման համար[4]:

Հետխորհրդային շրջանում միգրացիայի հիմնախնդիրը հայաստանյան քաղաքական օրակարգում, ինչպես նաև հասարակագիտական շատ հետազոտությունների կիզակետում և զանգվածային լրատվության միջոցների ուշադրության կենտրոնում է նախ և առաջ այն պատճառով, որ բնակչության զանգվածային արտագաղթը, բազում այլ հիմնախնդիրների հետ, առաջացնում է նաև ազգային անվտանգության սպառնալիքներ: Ադրբեջանից հայ փախստականների՝ 1988-1993 թթ. զանգվածային ներգաղթին (շուրջ 350.000 մարդ) փոխարինեց հետագա տարիների էլ ավելի զանգվածային արտագաղթը երկրից: Ըստ Վ. Խոջաբեկյանի՝ 1991-2000 թվականներին հանրապետությունը լքել է շուրջ 1 մլն 300 հազ. մարդ, և «1990-2000 թվականներին բնակչության բնական աճը նվազել է 6,5 անգամ, դա վկայում է Հայաստանից բնակչության մեծ արտագաղթի մասին»[5]: 2011 թ. մարդահամարի տվյալներով՝ հանրապետությունում հաշվառված և մշտական բնակվողների տարբերությունը կազմել է 147083 մարդ[6]: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2018 թ. տվյալներով՝ ՀՀ գյուղական բնակչության թիվը նույնպես նվազում է. 2017 թ. Հայաստանի գյուղերում բնակվում էր 1.076.9 հազ. մարդ[7]:

Հեռանալով երկրից՝ միգրանտները, այնուամենայնիվ, իրենց դրամական փոխանցումների միջոցով շարունակում են կարևոր դեր խաղալ Հայաստանի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման գործում. անձնական տրանսֆերտները արտերկրից 2013 թ. կազմել են 2.159.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2018 թ.՝ 1.452.1 մլն[8]: Հայաստանի համար միգրացիան և արտերկրից Հայաստան հարազատներին ուղարկվող դրամական տրանսֆերտները չափազանց մեծ դեր են ունեցել ոչ միայն առանձին տնային տնտեսությունների, այլև որոշ դեպքերում առանձին բնակավայրերի և տարածաշրջանների համար: Աշխատանքային միգրացիան օգնել է հաղթահարելու Հայաստանի ճգնաժամային տնտեսա-

---

[4] Տե՛ս **Atanesyan A., Mkrtchyan A., Tumanyan G.,** Some aspects of functioning of the Armenian Migratory networks (On the study of local communities in Armenian regions), p. 49-63 // **Mkrtichyan A**., (ed.), Armenians around the world: Migration and Transnationality, Peter Lang, Frankfurt am Main, 2015, էջ 54:

[5] **Վ. Խոջաբեկյան,** Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Եր., 2001, էջ 308-309:

[6] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2011 թ. մարդահամարի արդյունքները», 2011, էջ 80, http://armstat.am/file/doc/99478213.pdf, 18.01.2017:

[7] Տե՛ս https://www.armstat.am/file/doc/99511628.pdf, 05.06.2019:

[8] Տե՛ս http://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx, 25.06.2019:

կան անկումը՝ ապահովելով հազարավոր ընտանիքների ապրուստի միջոցը: Սակայն «միգրանտների կողմից ուղարկվող/բերվող փողը չի ներդրվում այնպիսի գործունեությունում, որը կարող է նպաստել երկարաժամկետ և կայուն զարգացմանը: Դա նշանակում է, որ արտերկրում աշխատանքը դադարեցնելուց հետո մարդիկ կարող են բախվել աղքատությանը»[9]: Մյուս կողմից, 2013 թ. և 2018 թ. դրամական փոխանցումների ծավալների համեմատությունը փաստում է, որ տրանսֆերտները գնալով քչանում են: Ստացվում է, որ արտագնա աշխատանքի ծավալների կտրուկ կրճատումը կարող է հանգեցնել տնային տնտեսությունների գերակշիռ մասի սոցիալական վիճակի վատթարացման:

Համեմատաբար փոքրաթիվ բնակչություն ունեցող մեր հանրապետության համար արտագաղթի բարձր ցուցանիշները առաջացնում են ժողովրդագրական ռիսկեր: Հաշվի առնելով մեր երկրի անվտանգությանը սպառնացող մի շարք արտաքին գործոններ, առաջին հերթին Ղարաբաղյան հակամարտությունը՝ ՀՀ-ից արտագաղթի մեծ չափերն ուղղակի մտահոգիչ են: Զանգվածային միգրացիան անվտանգության խնդիրներ է առաջացնում հատկապես սահմանամերձ գյուղերում, որտեղ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակն[10] այդ միգրացիան «սնող» գործոններից է: Այդ իրավիճակով պայմանավորված՝ անձնական անվտանգության փնտրտուքը շատ դեպքերում լուծվում է երկրից արտագաղթելու միջոցով, ինչը կրկին սրում է խնդիրներն ազգային անվտանգության առումով: Գյուղերի բնակչության նվազումն ինքնին խոչընդոտում է ազգային անվտանգության պատշաճ ապահովումը, հատկապես երբ գյուղացիները հեռանում են այլ երկրներում մշտական բնակություն հաստատելու նպատակով: Մինչդեռ տարածքային սփռվածությամբ պայմանավորված՝ գյուղական բնակչությունն իր ուրույն տեղն ունի ազգային անվտանգության համակարգում:

Հետևաբար միգրացիայի գործընթացը քննարկելիս հարկավոր է վերլուծել ոչ միայն այն հետևանքներն ու երևույթները, որոնք անմիջապես առնչվում են հենց միգրանտներին, այլ նաև շրջապատի վրա ազդեցությունները, տվյալ դեպքում՝ գյուղական համայնքներում և ընտանիքներում: Համայնքային ինքնությունը կարևոր տեղ ունի գյուղացու սոցիալական ինքնության համակարգում, և արտագաղթը պայմանավորող գործոնների թվում պետք է դիտարկել նաև գյուղացու ինքնության փոխակերպումները, որոնք ի հայտ են գալիս գոյության բավարար պայմանների բացակայության, այդ թվում՝ անվտանգությանը սպառնացող իրավիճակ-

---

[9] **Ա. Պողոսյան, Մ. Պողոսյան, Մ. Երանոսյան,** Աշխատանքի շուկայի առանձնահատկություններ և միգրացիան Լոռու մարզում զարգացման հնարավորությունների տեսանկյունից, Եր., 2014, էջ 51:

[10] Տե՛ս **Арутюнян Л.** Карабахское общество на этапе "ни войны ни мира": особенности момента и логика демократических перемен // Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Անցյալը, ներկան և ապագան: Միջազգային գիտաժողով, Եր., 2007 էջ 542-549:

ներում, սնվում են տվյալ իրավիճակներից և հարմարվում դրանց:

Արտագաղթը պայմանավորող գործոնների շարքում հատկապես կարևորվում են գյուղացիների սոցիալական ընկալումները (կոգնիցիաները)[11]: Սոցիալ-տնտեսական անհավասարությունն ընկալվում է որպես անարդարություն, առաջացնում է դժգոհություն, սոցիալական լարվածություն և շուկայական մրցակցության ու գերդաստանների նախկին դերի անկման պայմաններում հանգեցնում է գյուղական համայնքներում ավանդաբար ամուր սոցիալական հարակցման (Cohesion) խաթարման ու թուլացման: Իսկ սոցիալական հարակցումը՝ ներհամայնքային փոխօգնության առկայությունը, սերտ կապը համայնքի և ընտանիքի հետ, քաղաքացիական մասնակցությունը և սոցիալական ցանցի միջոցով առանձին խնդիրների լուծման հնարավորությունը, գյուղում սոցիալական կապիտալի և սոցիալական ցանցերի գործառման կարևոր նախապայման է[12]:

Այդ փոխկապվածության խզումն ու վերացումը հանգեցնում են ավանդական սոցիալական ցանցերի թուլացման ու խաթարման՝ դառնալով միգրացիոն ցանցի մեջ ներառվելու պատճառ: Իսկ սոցիալական ցանցերի նման փոխակերպումը և ներհամայնքային կապերի վերազգայնացումն այլափոխում են նաև գյուղում սոցիալական կապիտալի կառուցվածքը և բովանդակությունը: Արդյունքում ձևավորվել է անվստահության մթնոլորտ[13], խորհրդահայ գյուղին բնորոշ համընդհանուր փոխօգնության ինստիտուտը հայտնվել է վերացման եզրին: Դժվար ապրուստի պատճառով նվազել է միմյանց տուն հյուր գնալու հաճախականությունը, շուկայական հողաբաժանման հետևանքով շատացել են հարևանների վեճերը (օրինակ՝ ոռոգման ջրի և հողակտորների սահմանները խախտելու պատճառով): Ինչպես նշում է Վահե Սահակյանը, «ճգնաժամային պայմաններում բոլորը սկսեցին մտածել, թե ինչպես անեն, որ կարողանան ապրել գոնե դիմացինից լավ: Դա իր հետ բերեց մրցակցություն և որոշակի թշնամություն, ինչի արդյունքում հարևանական կապերը թուլացան»[14], հայաստանյան գյուղում «համախմբող մեխանիզմներ չկան՝ համատեղ գործունեություն չկա»[15]: Այս ամենին պետք է գումարել գյուղական դպրոցի «փլուզմամբ» մեծապես պայմանավորված՝ գյուղացիների մշակութային կապիտալի կազմալուծումը, որը հանգեցրել է աշխա-

---

[11] Տե՛ս **Ա. Մկրտիչյան, Գ. Շահնազարյան, Ա. Սահակյան, Ա. Վարտիկյան, Հ. Վերմիշյան,** Սոցիալական ինքնության պահպանման հիմնախնդիրները ՀՀ գյուղական համայնքներում, Եր., 2014, էջ 157-173:

[12] Տե՛ս **Jenson J., Beauvais C.,** Social Cohesion: Updating the State of the Research, Ottawa: CPRN, 2002, էջ 14:

[13] Տե՛ս **Ս. Մանուկյան,** Սոցիալական կապիտալի զարգացումը հայկական գյուղում. հայեցակարգր, իրավիճակի գնահատումը և մոդելները, Եր., 2007, էջ 99:

[14] **Վ. Սահակյան,** Համայնքի և համայնականության դրսևորումները և զարգացման միտումները Հայաստանում (սոցիոլոգիական վերլուծություն), թեկնածուական ատենախոսություն, 2002, էջ 123:

[15] Նույն տեղում, էջ 125:

տուժի որակազրկման, գյուղատնտեսական աշխատանքների արտադրողականության անկման, հետևաբար նաև՝ ֆինանսական կապիտալի չափերի նվազման և յուրօրինակ արատավոր երևույթների առաջացման: Ժամանակակից ԶԼՄ-ների, համացանցի ազդեցությամբ մշակութային կապիտալը դարձել է միաչափ և պարզունակ:

Այսպիսով, քանի որ Հայաստանում գյուղական ընտանիքների կենսագործունեությունը շատ հաճախ կազմակերպվում է «ծայրահեղ պայմաններում», արտագնացությունը դիտվում է որպես խնդիրները լուծելու ռազմավարություն: Սակայն արտագաղթը հանգեցնում է ավանդական ընտանիքների քայքայման, գլոբալ ընտանեկան ցանցերի ձևավորման և նոր սփյուռքի առաջացման: Այդպիսի գործընթացների շարունակականությունը ձևավորել է «արտագնա աշխատողի» սոցիալական տիպը[16], որի հարաբերակցությամբ են հաճախ որոշվում ներկայիս հայաստանյան գյուղական համայնքի սոցիալական կառուցվածքը և փոխակերպումների բնույթը, ընտանիքների կենսակերպի բովանդակությունը: Գյուղական ընտանիքների պարագայում լուրջ հիմնախնդիր է գենդերային դերերի վերասահմանումը: Այստեղ հաճախ գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ «կնոջ «աշխատանքային պարտականությունների» շրջանը մեծացել է տղամարդու այդպիսի շրջանի փոքրացման պատճառով», որի հետևանքով «ավանդույթները մասնակիորեն փոխվել են, սակայն պայմանավորված ոչ թե քաղաքացիական հասարակության՝ կնոջ և տղամարդու իրավահավասարության արժեքների յուրացումով, այլ սոցիալ-տնտեսական այս ծանր պայմաններում կնոջ դերի աճով»[17]:

Ավանդական սոցիալական կապերի փոխակերպումը միգրացիոն ցանցերի կարող ենք դիտել որպես տեղական համայնքների ներկայացուցիչների միջև ավանդական սոցիալական հարակցման խաթարում, այն է՝ նոր պայմաններում համայնքի ներկայացուցիչների միջև գործնական կապերի ձևափոխում այլ կապերի կամ էլ ավանդական սոցիալական կապերի ու հարաբերությունների խզում և համայնքից դուրս նոր կապերի ստեղծում՝ առավելապես ընտանեկան միգրացիոն նոր ցանցերի ձևավորում՝ «վերազգային» սկզբունքով: Ներընտանեկան համերաշխության շնորհիվ գործառող այդ ցանցերը ձևավորում են նոր մշակույթ հայ ընտանիքներում: Վերոնշյալ սոցիալական գործընթացները ոչ միայն փոխակերպում են հայաստանյան գյուղական համայնքների սոցիալական կապերն ու հարաբերությունները՝ դրանք դարձնելով վերազգային, այլև վկայում են հասարակության ներսում այնպիսի հիմնախնդիրների հրատապության մասին, ինչպիսիք են սոցիալական կապերի և հարաբերությունների թուլացումն ու խեղվածությունը, հա-

[16] Տե՛ս **Ա. Մկրտիչյան, Գ. Ն. Շահնազարյան, Ա. Կ. Սահակյան, Ա. Ռ. Վարտիկյան, Հ. Ռ. Վերմիշյան**, նշվ. աշխ., էջ 25:

[17] **Վ. Սահակյան,** նշվ. աշխ., էջ 144:

սարակության անդամների միջև վստահության մշակույթի խեղաթյուրումը, հայ գյուղացու ավանդական ինքնության կորուստը, ավանդական համայնքի ներկայացուցիչների կողմից իրենց տնտեսական խնդիրների լուծումը Հայաստանից դուրս սոցիալ-տնտեսական կապերի մեջ փնտրելը: Սակայն նման «լուծումը» թվացյալ է, քանի որ չի փոխում իրադրությունը, պարզապես հիմնախնդիրների մի «փաթեթը» փոխարինում է մյուսով, շատ դեպքերում՝ առանց հեռանկարի, ինչը կարող է հանգեցնել կյանքի իմաստազրկման:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ հայաստանյան գյուղական համայնքների բնակչությունը, ներառվելով վերազգային միգրացիոն ցանցերի մեջ, սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրների է բախվում, որոնց ուսումնասիրությունը շատ արդիական է տարածաշրջանային և աշխարհաքաղաքական ներկայիս զարգացումներին համապատասխան պետական քաղաքականություն մշակելու և իրականացնելու առումով:

Բանալի բառեր – *գյուղական համայնք, փոխադարձ վստահության պակաս, արտագաղթ, դրամական տրանսֆերտներ, ինքնության փոխակերպումներ, սոցիալական հարակցման խաթարում*

АРЕМ МКРТЧЯН – ***Проблемы сельских общин РА в контексте миграции.*** – Приватизация земли принесла в сельские общины Армении коренные социальные преобразования. Разрыв прежних социальных связей привёл к дефициту доверия. Трансформация социальной идентичности сельчан стимулирует их эмиграцию и формирует, преимущественно на семейно-родственной основе, миграционные сети. И хотя денежные трансферты помогают разрешить текущие социально-экономические вопросы сельских общин, в долгосрочной перспективе они порождают большие социально-демографические проблемы.

Ключевые слова: *сельская община, дефицит взаимного доверия, эмиграция, денежные трансферты, трансформация идентичности, разрыв социальных связей*

AREM MKRTCHYAN – ***Problems of the Armenian rural communities in the context of migration.*** – As a result of land privatization, the rural communities of Armenia underwent radical social transformations. The severance of previous social cohesion led to a deficiency of trust. The transformation of the social identity of the villagers stimulates their emigration and the formation of migration networks mainly on a family-related basis. Cash transfers contribute to solving the socio-economic problems of rural communities, but in the long run, they generate significant socio-demographic problems.

Key words: *rural community, deficiency of reciprocal trust, emigration, remittances, rural identity transformation, disruption of social cohesion*

Ներկայացվել է՝ 20.09.2019
Գրախոսվել է՝ 10.10.2019
Ընդունվել է տպագրության՝ 03.12.2019